

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Հունիս	2022 թ.		Բ	6639415802
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
13	Հունիս	2022 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			8 Փետրվար, 2022 թ.	ՀԳԴ-8-22	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ.շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Շ/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Շտրիանումը ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ակբար Կարիմի գործով հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	1	2300		2300
2	Թիվ Թիվ 51103021 գործով հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	13	2300		29900
3	Գևորգ Վարդանյանի և Անիկ Հոբոսյանի գործով հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	2.5	2300		5750
4	Թիվ Թիվ Թիվ 14180122 գործով հայերեն-հնդկերեն գրավոր թարգմանություն	էջ	10.5	2800		29400
Շտրամներ						67350

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)

KHACHATRYAN TIGRAN
3814880340

Ծառայություն (աշխատանք) ստացող

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

13/06/2022 12:02:00

15/06/2022 11:06:47

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

13 մայիս 2022թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ.Մելիքյանս, ուսումնասիրելով Կիպրոսի Հանրապետության (այսուհետ՝ ԿՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻԻ կողմից ստացված դիմումը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2022 թվականի մայիսի 10-ին ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակառարողական հիմնարկից ստացվել է Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԻԻՀ քաղաքացի ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻԻ դիմումը:

2022 թվականի մայիսի 13-ին ՀՀ գլխավոր դատախազության միջազգային իրավական համագործակցության վարչության պետի կողմից դիմումին տրվել է պատասխան, որը հայերեն լեզվով է:

Նկատի ունենալով, որ ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻԻ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ ՀՐԱՆՈՒՇ ԹԱՆՄԱՍՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻԻ կողմից ստացված դիմումին տրված պատասխանի պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր AN0780981, դիպլոմ թիվ 013781) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

«Թարգմանչին նախագորչացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության
միջազգային-իրավական համագործակցության
փարչության դատախազ

Գ.Մելիքյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Ըմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի. ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտախանարվության մասին նախագորչացված եմ:

Թարգմանիչ՝

Հ.Թախմուսյան

«13» 05 2022թ.

Որոշում
թարգմանիչ նշանակելու մասին

23-ը մայիսի 2022թ.

ք.Սիսիան

Սյունիքի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Գ.Խալաթյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 51103021 քրեական գործի նյութերը,

պարզեցի՝

2022 թվականի մայիսի 19-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածի կարգով Սյունիքի մարզի դատախազություն է ստացվել ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնի պետի տեղակալ Գ.Թովմասյանի վարույթում քննված թիվ 51103021 քրեական գործը:

Կատարած հանցավոր արարքի համար Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ռեզա Մոհամմադի Ալիոեզային ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Իվեկո» մակնիշի 59 AA 141 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վարորդ, խախտել է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջներն ու ճանապարհային երթևեկության կանոնները, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

Ռեզա Մոհամմադի Ալիոեզային, ունենալով «B, B, C, C, D, D, BE, CE, CE, DE և DE» կարգի վարորդական վկայական, 2021թ. դեկտեմբերի 19-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, վարելով «Իվեկո» մակնիշի 59 AA 141 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը, Երևան-Մեղրի ավտոճանապարհի 196,2-րդ կիլոմետր հատվածում թույլ է տվել ՀՀ կառավարության կողմից հաստատված «Ճանապարհային երթևեկության կանոնների» 62-րդ, 65-րդ կետերի ու «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, որոնցով տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն, առաջացրել ճանապարհատրանսպորտային պատահար՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, որն էլ անզգուշությամբ առաջացրել է հանդիպակաց երթևեկող «Մերսեդես-Բենց» մակնիշի 35 XP 955 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վարորդ Գառնիկ Դավիթի Հարությունյանի մահը:

Այսպես.

Ռեզա Մոհամմադի Ալիոեզային երթևեկության անվտանգությունն ապահովելու, վթարային իրադրություն չստեղծելու և տվյալ պատահարի առաջացումը բացառելու նպատակով, այդպիսի տեխնիկական հնարավորություն ունենալու պայմաններում, համարժեք միջոցներ չի ձեռնարկել, այն է՝ երթևեկելով դեպքի վայրի ճանապարհահատվածում՝ իր վարած տրանսպորտային միջոցի տեսակի երթևեկության համար սահմանված թույլատրելի առավելագույն 70 կմ/ժ-ը գերազանցող՝ շուրջ 102,8 կմ/ժ-ից բարձր արագությամբ, ուշադիր չի հետևել առջևում տիրող ճանապարհատրանսպորտային իրադրության զարգացմանն ու առջևից համընթաց ուղղությամբ ընթացող «Լեքսուս» մակնիշի 02 OA 102 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի առկայության պայմաններում, չի

ընտրել երթևեկության համապատասխան անվտանգ ու սահուն ուժիմ և մոտենալով վերջինիս ու ժամանակին համապատասխան միջոցներ չձեռնարկելով՝ այդ ավտոմոբիլի նկատմամբ անվտանգությունն ապահովող միջտարածություն պահպանելու համար, դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի ուղեմաս, այնուհետև կրկին իր երթևեկելի ուղեմաս մուտք գործելու ընթացքում կիսակցորդիչի ձախ կողային հետին մասով հանդիպակաց երթևեկելի ուղեմասում բախվել է արգելակված վիճակում դեպի Երևան քաղաք ընթացող «Մերսեդես-Բենց» մակնիշի 35 XP 955 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի ձախ կողային հատվածներին, ինչի հետևանքով «Մերսեդես-Բենց» մակնիշի 35 XP 955 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վարորդ Գառնիկ Հարությունյանն ստացած բաց, բութ գանգուղեղային վնասվածքներով պայմանավորված գլխուղեղի դիֆուզ տրավմատիկ ախտահարումից մահացել է:


Գործով մեղադրյալ Ռեզա Մոհամմադի Ալիոեզայիին հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության Շաբեսթար քաղաքի բնակիչ, ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, չի տիրապետում և քրեական դատավարության ընթացքում ցանկացել է հանդես գալ պարսկերենով:



Նկատի ունենալով, որ Ռեզա Մոհամմադի Ալիոեզայիին ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենին, չի տիրապետում, իսկ թիվ 51103021 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու, գործը Սյունիքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու, ինչպես նաև՝ տուժողին հետագայում իր դիմումներն ու միջնորդությունները նշված դատարան ուղարկելու իրավունքը պարսկերենով պարզաբանելու նպատակով անհրաժեշտ է վերջինիս հասցեագրված գրությունը և համապատասխան դատավարական փաստաթղթերը թարգմանել անգլերենով, ուստի, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 52-րդ, 53-րդ և 83-րդ հոդվածներով,

որոշեցի՝

1. Թիվ 51103021 քրեական գործով որպես նշանակել Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (ծնված՝ 15.01.1964թ., անձնագիր՝ AN 0780981, կրթությունը՝ բարձրագույն, ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ «Արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն)» մասնագիտությամբ), ով գործով չչահագրգռված անձ է:

2. Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին նախագգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Մարզի դատախազի տեղակալ՝  Գ.Խաչատրյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

25.05.2022թ.

ք.երևան

«ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով Գևորգ Վարդանյանի և Անիկ Հոբոսյանի դիմումը,

ՊԱՐԶԵՑԻ՝

29.04.2021թ. Իրանի Իսլամական Հանրապետության իրավասու մարմիններին է ուղարկվել Գևորգ Վարդանյանի և Անիկ Հոբոսյանի 28.04.2021թ. դիմումը:

25.05.2022թ. ՀՀ ԱԳՆ-ից ստացվել է հիշյալ դիմումի վերաբերյալ ԻԻՀ իրավասու մարմնի գրությունը՝ պարսկերեն լեզվով:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցության մասին» 05.07.2006թ. համաձայնագրի դրույթները, նկատի ունենալով, որ Կրիստինա Խանիկյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Գ.Վարդանյանի և Ա.Հոբոսյանի 28.04.2021թ. դիմումի վերաբերյալ ՀՀ ԱԳՆ-ից ստացված փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել հրավիրել Կրիստինա Խանիկյանին (անձնագիր AG սերիայի №0494708, ՀՀ ԱՆ տեղեկանք տրված 06.07.2010թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության
միջազգային-իրավական
համագործակցության
վարչության դատախազ




Ա.Խաչատրյան

Արացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և
ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և
պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ
հոդվածով նախատեսված պատրաստանավորության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Կրիստինա Խանիկյանի



«25» 05 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

27.05.2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Է. Անանյանս, ուսումնասիրելով թիվ 14180122 քրեական գործով մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազություն է ստացվել մեղադրական եզրակացությամբ թիվ 14180122 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Վինոդ Վիջեյ Կումարի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Մինչդատական քրեական վարույթի ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Վինոդ Վիջեյ Կումարը տիրապետում է հնդկերենին, հետևաբար մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները անհրաժեշտ է նրան տրամադրել հնդկերենով, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Նկատի ունենալով, որ Վինոդ Վիջեյ Կումարը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է հնդկերենին, ուստի մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման հաստատված թարգմանությունները վերջինիս հասկանալի լեզվով նրան հանձնելու համար հայերենից հնդկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին/անձնագիր AT 05094386/:

Նկատի ունենալով, որ Մանիկ Խեչոյանը տիրապետում է հայերեն և հնկերեն լեզուներին, որա ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 53-րդ և 83-րդ հոդվածով,


ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 14180122 քրեական գործով մեղադրական մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման թարգմանությունն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Խեչոյանին:

Մանիկ Խեչոյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Սահմանափակ ընկերությունը նախագրուել է քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ
միակ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին
մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական
շրջանների դատախազության դատախազ՝

 E. Անանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբնա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-
րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ
քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին
նախագրուել է քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ



Մանիկ Խեչոյան

«27» 05 2022 թ.

